



**MILLENNIUM  
CHALLENGE  
CORPORATION**  
REDUCING POVERTY THROUGH GROWTH



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ  
ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ**

Մամլո հաղորդագրություն

Տեղեկությունների համար դիմել՝  
Նանե Աճեմյանին, հեռ.՝ 37410.547.988  
Ջեյն Մացարեկային, հեռ.՝ 202.501.3850

11 հունիսի, 2007թ.

**ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ  
ՀՄԿ գլխավոր գործադիր պաշտոնյան Հայաստանում է՝ գնահատելու ծրագրի առաջընթացը**

Երևան, Հայաստան - Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) այսօր նշեց Երևանում նոր գրասենյակի բացումը, որի ժապավենը կտրելու հանդիսավոր արարողությանը ներկա գտնվեցին Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի (ՀՄԿ) գլխավոր գործադիր տնօրեն դեսպան Ջոն Դանիլովիչը, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը, ՀՄՀ-Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանն ու ՀՄԿ-ի Հայաստանի ծրագրի տնօրեն Ալեքս Ռասինը:

Միջոցառման ժամանակ դեսպան Դանիլովիչն ասաց. «Ծրագիրը լավ առաջ է ընթանում: Սկսել ենք գյուղացիական տնտեսությունների շահութաբերության աճին ուղղված ուսուցումը՝ Ջրից դեպի շուկա գործունեության շրջանակում, և արդեն ավարտին են մոտենում Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրերի առաջին փուլի նախագծային աշխատանքները: Բացի այդ, հայտարարված է մրցույթ Ռոտգվոդ գյուղատնտեսության ենթածրագրի նախնական փուլի նախագծային առաջարկների համար, իսկ այս ենթածրագրի շրջանակում առաջին շինարարական աշխատանքները նախատեսվում են աշնանը:

Միաժամանակ, մենք ողջունեցինք ՀՀ խորհրդարանական ընտրությունները ու շնորհավորում ենք Հայաստանի բնակչությանը նախորդ ընտրությունների համեմատ ավելի հաջող ընտրություններ ունենալու համար: Այս ընտրությունները կարծես թե դրական տեղաշարժ էին միջազգային չափանիշների ուղղությամբ, սակայն մենք շարունակում ենք ուշադիր հետևել խախտումների մասին հնչած մեղադրանքների հետաքննման ընթացքին: Ինչպես Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ ծրագրի մասնակից բոլոր երկրների, այնպես էլ Հայաստանի մասնակցության շարունակման վերաբերյալ ՀՄԿ խորհուրդը որոշում կկայացնի դեկտեմբերին՝ երկրների ընտրության հարցերով կայանալիք ամենամյա նիստի ժամանակ»:

2006թ. մարտի 27-ին կնքված ու սեպտեմբերի 29-ին գործողության մեջ մտած Համաձայնագրով նախատեսվում է կրճատել գյուղական աղքատությունը՝ գյուղատնտեսության ոլորտում տնտեսական ցուցանիշների կայուն ու տևական աճի ապահովման միջոցով: Հայաստանը նախատեսում է դա իրագործել գյուղական ճանապարհներում, որոգման ենթակառուցվածքներում ռազմավարական ներդրումներ կատարելու, ֆինանսական ու տեխնիկական աջակցություն ցուցաբերելու, գյուղացիական տնտեսություններին ու ագրոբիզնեսին աջակցելու հնգամյա ծրագրի միջոցով: Ծրագիրը շոշափելի արդյունքներ կապահովի շուրջ 750000 հոգու կամ գյուղական բնակչության 75%-ի համար: Նախատեսվում է, որ այն կկրճատի աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում ու կավելացնի տարեկան եկամուտները:

Համաձայնագրով նախատեսվում է 67 միլիոն ԱՄՆ դոլար հատկացնել շուրջ 943 կմ գյուղական ճանապարհների վերականգման համար, որը կազմում է Հայաստանի առաջարկվող կենսական նշանակության ճանապարհային ցանցի ավելի քան մեկ երրորդը: Պատրաստ լինելուց հետո կենսական նշանակության ճանապարհային ցանցը կապահովի, որպեսզի յուրաքանչյուր գյուղական համայնք էլքի հնարավորություն ունենա դեպի շուկաներ, ծառայություններ եւ հիմնական ճանապարհային ցանց: Ըստ Համաձայնագրի ՀՀ կառավարությունը պետք է ապահովի լրացուցիչ ռեսուրսներ ճանապարհային ցանցի պահպանման համար: Համաձայնագիրը նախատեսում է նաև 146 միլիոն ԱՄՆ դոլարի առանձին բաղադրիչ, որի նպատակն է բարձրացնել մոտ 250000 ֆերմերային տնտեսությունների (որոնցից 34%-ը գլխավորում են կանայք) արտադրողականությունը՝ բարելավելով ջրամատակարարումը, բերքատվությունը, խթանելով բարձրարժեք բերքի մշակումը եւ մեծացնելով գյուղատնտեսական ոլորտի մրցունակությունը:

###

Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան (ՀՄԿ) ԱՄՆ պետական կազմակերպություն է, որն աշխատում է աշխարհի ամենաաղքատ երկրների հետ՝ հիմնվելով այն սկզբունքի վրա, որ օժանդակությունն առավել արդյունավետ է, երբ տնտեսական աճի խթանումն ու ծայրահեղ աղքատության վերացումը իրականացվում է լավ կառավարման, տնտեսական ազատությունների ու մարդկային կապիտալի ոլորտում ներդրումների ամրապնդման ճանապարհով:

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար:



**MILLENNIUM  
CHALLENGE  
CORPORATION**  
REDUCING POVERTY THROUGH GROWTH



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ  
ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ**

Մամլո հաղորդագրություն

Տեղեկությունների համար դիմել՝  
Նանե Աճեմյանին, հեռ.՝ 37410.547.988  
Ջեյն Մացարեկային, հեռ.՝ 202.501.3850

11 հունիսի, 2007թ.

**ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ  
ՀՄԿ գլխավոր գործադիր պաշտոնյան Հայաստանում է՝ գնահատելու ծրագրի առաջընթացը**

Երևան, Հայաստան - Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) այսօր նշեց Երևանում նոր գրասենյակի բացումը, որի ժապավենը կտրելու հանդիսավոր արարողությանը ներկա գտնվեցին Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի (ՀՄԿ) գլխավոր գործադիր տնօրեն դեսպան Ջոն Դանիլովիչը, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը, ՀՄՀ-Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանն ու ՀՄԿ-ի Հայաստանի ծրագրի տնօրեն Ալեքս Բասինը:

Միջոցառման ժամանակ դեսպան Դանիլովիչն ասաց. «Ծրագիրը լավ առաջ է ընթանում: Սկսել ենք գյուղացիական տնտեսությունների շահութաբերության աճին ուղղված ուսուցումը՝ Ջրից դեպի շուկա գործունեության շրջանակում, և արդեն ավարտին են մոտենում Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրերի առաջին փուլի նախագծային աշխատանքները: Բացի այդ, հայտարարված է մրցույթ Ռոտգվոդ գյուղատնտեսության ենթածրագրի նախնական փուլի նախագծային առաջարկների համար, իսկ այս ենթածրագրի շրջանակում առաջին շինարարական աշխատանքները նախատեսվում են աշնանը:

Միաժամանակ, մենք ողջունեցինք ՀՀ խորհրդարանական ընտրությունները ու շնորհավորում ենք Հայաստանի բնակչությանը նախորդ ընտրությունների համեմատ ավելի հաջող ընտրություններ ունենալու համար: Այս ընտրությունները կարծես թե դրական տեղաշարժ էին միջազգային չափանիշների ուղղությամբ, սակայն մենք շարունակում ենք ուշադիր հետևել խախտումների մասին հնչած մեղադրանքների հետաքննման ընթացքին: Ինչպես Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ ծրագրի մասնակից բոլոր երկրների, այնպես էլ Հայաստանի մասնակցության շարունակման վերաբերյալ ՀՄԿ խորհուրդը որոշում կկայացնի դեկտեմբերին՝ երկրների ընտրության հարցերով կայանալիք ամենամյա նիստի ժամանակ»:

2006թ. մարտի 27-ին կնքված ու սեպտեմբերի 29-ին գործողության մեջ մտած Համաձայնագրով նախատեսվում է կրճատել գյուղական աղքատությունը՝ գյուղատնտեսության ոլորտում տնտեսական ցուցանիշների կայուն ու տևական աճի ապահովման միջոցով: Հայաստանը նախատեսում է դա իրագործել գյուղական ճանապարհներում, որոգման ենթակառուցվածքներում ռազմավարական ներդրումներ կատարելու, ֆինանսական ու տեխնիկական աջակցություն ցուցաբերելու, գյուղացիական տնտեսություններին ու ագրոբիզնեսին աջակցելու հնգամյա ծրագրի միջոցով: Ծրագիրը շոշափելի արդյունքներ կապահովի շուրջ 750000 հոգու կամ գյուղական բնակչության 75%-ի համար: Նախատեսվում է, որ այն կկրճատի աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում ու կավելացնի տարեկան եկամուտները:

Համաձայնագրով նախատեսվում է 67 միլիոն ԱՄՆ դոլար հատկացնել շուրջ 943 կմ գյուղական ճանապարհների վերականգման համար, որը կազմում է Հայաստանի առաջարկվող կենսական նշանակության ճանապարհային ցանցի ավելի քան մեկ երրորդը: Պատրաստ լինելուց հետո կենսական նշանակության ճանապարհային ցանցը կապահովի, որպեսզի յուրաքանչյուր գյուղական համայնք էլքի հնարավորություն ունենա դեպի շուկաներ, ծառայություններ եւ հիմնական ճանապարհային ցանց: Ըստ Համաձայնագրի ՀՀ կառավարությունը պետք է ապահովի լրացուցիչ ռեսուրսներ ճանապարհային ցանցի պահպանման համար: Համաձայնագիրը նախատեսում է նաև 146 միլիոն ԱՄՆ դոլարի առանձին բաղադրիչ, որի նպատակն է բարձրացնել մոտ 250000 ֆերմերային տնտեսությունների (որոնցից 34%-ը գլխավորում են կանայք) արտադրողականությունը՝ բարելավելով ջրամատակարարումը, բերքատվությունը, խթանելով բարձրարժեք բերքի մշակումը եւ մեծացնելով գյուղատնտեսական ոլորտի մրցունակությունը:

###

Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան (ՀՄԿ) ԱՄՆ պետական կազմակերպություն է, որն աշխատում է աշխարհի ամենաաղքատ երկրների հետ՝ հիմնվելով այն սկզբունքի վրա, որ օժանդակությունն առավել արդյունավետ է, երբ տնտեսական աճի խթանումն ու ծայրահեղ աղքատության վերացումը իրականացվում է լավ կառավարման, տնտեսական ազատությունների ու մարդկային կապիտալի ոլորտում ներդրումների ամրապնդման ճանապարհով:

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: